եանը նորէն — եւ աւա՜ղ, վերջին անգամ — փոթորկի կենտրոնում։ Վտիտ մարմինը գահավէժ պտոյտներ է գործում սպառնացող հողմերի մէջ, գրիչը գործում է արագ-արագ, օրհասական կատաղութեամբ, ինտելիգենտ գործիչը զգում է գալիք արհաւիրքը եւ դերմարդկային ճիգ է թափում փրկելու ժողովուրդը։ գրում է անդադար զեկուցումներ, վարում է բանակցութիւնը նենգաւոր Ջեվդեթի հետ, վարում է սքանչելի վարպետութեամբ, ձգտում է ըստ կարելւոյն ժամանակ շահիլ, կոտորածի առաջն առնել մինչեւ ռուսների կամաւորների մուտքը, նեռւում է շարունակ աջ ու ձախ, արձակելով յուսահատ կոչ ու յորդոր, քարոզելով խոհեմութիւն ու զգուշութիւն, սպառում է բոլոր խաղաղ միջոցները թշնամու հետ... եւ երբ հասնում է փորձութեան վերջին ժամը — Վասպուրականի ըստ [illegible]պի ու երկունքի ժամը — Վռամեանը [illegible]ած ա[illegible] չկայ հրապարակում... Մի դիւային տաւոր [illegible]ավիշտակել էր նրան իր հարազատների չքաւ[illegible]այրից։

«Վռամեանը տարա՜ն»— լուրը հազարաձայն արձագանգով ցնցում է շրջապատը, ժողովուրդը սասանւում է, երիտասարդութիւնը ելեքտրականանում։

«Վռամեանը տարա՜ն»... Ո՞ւր տարան... «Դէպի Բիթլիս», «դէպի Դիարբէկիր»... Շը-շուկներ միայն— եւ ոչ մի լուր։ Ո՞րտեղ, ո՞ր ձորի մէջ, ո՞ր թփի տակ ժողովրդական գործիչը տպրեց իր հոգեվարքը...

Հարցրէ՛ք այն՝ Վասպուրականի հողմերին, որ քառորդ դարուց ի վեր անտարբեր սուլում են մեր անհաշիւ հերոսների անթաղ նշխարների վրայ...

* * *

Վիշտը, այո՛, պողպատի պէս ճնշում է մեր կուրծքը, մեր անբախտ ընկերների ուրուականները ամէն վայրկեան յաճախում են մեզ, ամէն վայրկեան յիշեցնում են անօրինակ եղեռնը։ Սակայն դրա հետ ունինք այսօր դէթ այն ներքին համոզումն ու սփոփանքը՝ որ հասել է մեր վիթխարի ու արիւնալի փորձութեան վերջին հանգրուանը... Եւ ես կ՚ուզէի բերել այստեղ, այս թռուցիկ կենդանագրի վերջաբանում, մի քանի յուզիչ տողեր մեր անմոռանալի ընկերոջ առաջին խմբագրական յօդուածից («Դրօշակ», մայիս 1897)։

«Քալէ՛ հայ ժողովուրդ... Հո՛դ, այդ հանգրուանին մէջ չեն վերջանար անապատին աւազները, բայց հեռո՛ւն... սրատես եւ փորձ աչքեր կը նշմարեն դալարագեղ եւ ջրդի վայրերու ուրուագծերը, որոնք ա՛լ կրկներեւոյթներ չեն հիմա...

«Գիտեմ, եղբայրս, յոգնած ես, ուժասպառ, արեւակէզ։ բայց աշխուժով առաջ նետէ արիւնաշաղաղ ոտքերդ... եթէ չես ուզեր մրկիլ ու ոչնչանալ անապատին աւազներուն մէջ։ ժի՛ր եղիր, հեռուն օվասիսները կ՚երեւին, իսկ անկէ անդին... Անապատին վերջն է արդէն... Քալէ՛, հայ ժողովուրդ...»։

* * *

Եւ «քալեց» նա ինքը, մեր տարաբախտ ընկերը, ժողովրդի հարազատ զաւակը, ժողովրդի անխոնջ ու շարքաչ ուղեկիցը, քալեց նա քսան տարի շարունակ Հայրենիքի աւազուտ անապատում, քալեց անդուլ, անդադրում, փշերին ու մացառներին զարնուելով, ոտքերը արիւնոտելով եւ ընկաւ դարձեալ կէս ճամբուն եւ չտեսաւ իր երազած «դալարագեղ օվասիսները»...

Սակայն նա գիտէր, համոզուած էր, որ դա վերջին փորձութիւնն է բազմաչարչար հայութեան, որ դա վերջին տիտանեան խարոյկն էր հայկական մարտիրոսութեան, որ նրան պէտք է հետեւէր վարդագոյն, գեղաժպիտ Վերածնունդը...

Նա գնաց, ընկաւ արիւնաթաթախ՝ անապատի աւազներում, բայց Հայրենիքի մեծ Ոգին առաւ նրան գուրգուրանքով իր գիրկը։

«Վռամեանը տարա՜ն»... Ո՞ւր տարան— յայտնի չէ... Բայց նա արդէն վերադարձել է եւ կերտել իր գերեզմանը հազարաւոր ընկերների սրտերում, կերտել է իր գերեզմանը «Դաշնակցութեան» յաւերժաթարմ, մշտականաչ ծառի տակ։